

ՄԿՐՏԻՉ ԿՈՐՅՈՒՆ



ԾԱՂԿԱԶՈՐ

891.99.5

5-78

ՊԵՏՎՐԱԾ

ՄԿՐՏԻՉ ԿՈՐՅՈՒՆ

2011-07

891.995
4-78
սթ.

ԾԱՂԿԱՁՈՐ

ՄԱՆԿԱԿԱՆ ՎՈՏՈՆԱՎՈՐՆԵՐ



ՊԵՏՀՐԱՑ
ՀԼԿՑԵՄ ԿԿ ԿԲՑ ՄԱՆԿԱԿԱՆԱՏԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

124 MAY 2018

10196



ԾԱՂԿԱՋՈՐ

Այնքա՞ն ծաղիկ, այնքա՞ն բույր,
Այնքա՞ն առվակ ու աղբյուր,
Այնքա՞ն գետակ քչքչան,
— Զա՞ն Ծաղկաձոր
— Զա՞ն, զա՞ն, զա՞ն:

Ծաղկաձորում ծաղկաշաղ,
Թմբուկ, նվագ, յերդ ու տաղ,
Չով իրիկուն, թեժ խարույկ,
Հոգով, մարմնով մենք առույդ,
Ծաղկի նման հոտավետ,
Թիթեռի պես հովի հետ,
Գետակի պես կարկաչուն,
Յեվ յերդում ենք և աճում:



657
41

Այնքա՞ն ծաղիկ, այնքա՞ն բույր,
Այնքա՞ն առվակ ու աղբյուր,
Այնքա՞ն գետակ քչքչան,
— Զա՞ն Ծաղկաձոր
— Զա՞ն, զա՞ն, զա՞ն:

ԽՆԴՐԻԹՅԱՆ ՏՈՆԱԾԱՌ

Հաղար հույզով, հաղար լույսով,
Հաղար բերքով ես դու յեկել,
Ինչքա՞ն լավն ես, ինչքա՞ն պայծառ,
Հե՞յ ջան, խնդության տոնածառ:

Մեր մեծ Ստալինը հարազատ
Պարզեց մեզ նոր կյանք ազատ,
Կյանքն ուրախ ե, կյանքը պայծառ,
Հե՞յ ջան, խնդության տոնածառ:

Մեր ուրախ յերդն ե զիլ հնչում,
Առվակի պես միշտ կարկաչում,
Ստալինյան արեվով դու վառ,
Հե՞յ ջան, խնդության տոնածառ:

ԿԱՆԱԶ ԴԱՇՏԻ

Կանաչ դաշտի լալեն եմ յես,
Ջա՞ն,

Ստալին պապի բալեն եմ յես,
Ջա՞ն,

Դալար արտի ծաղիկն եմ յես,
Ջա՞ն,

Ստալին պապի թոռնիկն եմ յես,
Ջա՞ն,

Կարմրաթշիկ Գրիգորն եմ յես,
Ջա՞ն,

Ստալին պապի զինվորն եմ յես,
Ջա՞ն:

ԳՈՎՔ ՄԵԾ ՍՏԱԼԻՆԻՆ

(Ժողովրդական)

Արև ծագեց մեր աշխարհին,
Մարդուն, հողին, հանդին, քարին,
Տեսանք կյանքի սերն ու բարին,
Մեզ արև տվողիդ մատաղ:

Խորտակվեց զրկողը, չարը,
Որ ու կյանք տեսավ նաչարը,
Թող ծաղկի քո լույս հանձարը
Մեզ արևն հանողիդ մատաղ:

Դու վոր կաս մի ահմար լույս ես,
Համ սեր, համ կյանք, համ ել հույզ ես՝
Բանվոր մարդուն խրախույս ես,
Քեզ ծնող մայր հողիդ մատաղ:

Քո եղ գրած լույս որենքը,
Շինեց մեր նոր կյանքի շենքը.
Մեր սրտերից բխեց յերդը
Նոր որենք գրողիդ մատաղ:

Խոսքեր ունես վոսկուց անգին,
Շուռ տվեցիր աշխարքը հին,

Հասցրիր մեղ ուրախ կյանքին
Մեղ նոր կյանք տվողիդ մատաղ:

Կյանքը բուրաստան ես արել,
Ծաղկած մրգաստան ես արել,
Յերգի ճոխ դաստան ես արել
Արեվիդ ու շողիդ մատաղ:

Ծովը ծովի հետ միացավ,
Անապատը պարտեզ դարձավ.
Կյանքը ուրախ, անվիշտ անցավ,
Ուրախ կյանք բերողիդ մատաղ:


Խորհուրդները մնան հաստատ,
Ստալինը մեղ հարազատ,
Ընկերներով բյուր ու հազար
Յերկիրը պահողիդ մատաղ:

Հոգում ծաղկած զառ գարունը
Այս յերգն ասել ե կորյունը,
Քեզ իմ կյանքը, իմ արյունը
Անմահական շողիդ մատաղ:



ԾԻՏԻԿՆԵՐԻ ԶՐՈՒՑՑ

Ծիտը ծտին ասաց՝
— Ո՞ւր ե ճուտդ, ծի՛տ,
Ճուտը բնից դլուխն հանեց ասաց՝
ծի՛տ...



ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ԾԻՏԻԿԸ

— Ճի՛վ, ճի՛վ, ճի՛վ,
Ո՞վ ե յերգում ծառին,
— Ճի՛վ, ճի՛վ, ճի՛վ,
Ծիռն ե յերգում ծառին:

Մանուկ.— Ի՞նչ ես ուզում, ծիտի՛կ:
Ծիտիկ.— Ցորնի մի բուռ հատիկ:
Մանուկ.— Ծիտի՛կ, յե՞րբ ես դատել,
Վոր ուզում ես ուտել:

Ծիտիկ.— Յես ծիտիկ եմ,
Պստիկ ճուտ եմ,
Առաջ ուտեմ,
Հետո դատեմ,

Վորսամ բղեղ,
Վորդ ու թրթուտ,
Մաքրեմ պարտեղ
Այդի ու դուտ:

Մանուկ.— Սիրում ծիտիկ,
Առ քեզ հատիկ,
Կե՛ր, լիացի՛ր,
Շուտ մեծացիր,
Մեր պարտեղին
Պաշտպան դարձիր:

Մ Ե Վ Ա Ւ

— ԱՇ պղղան մեղու,
Տղտղան մեղու,
Թեվերդ թափ տուր,
Յերգիր ու ծափ տուր,
Ծաղկունքն են զարթնել,
Գարուն ե արդեն:
Ծիլ, տերել ու խոտ,
Ծաղկունքը շաղոտ,
Գարնան գովքն ասում,
Քեզ են սպասում:
Ել մի՛ սպասիր,
Խելիդ տուր հասիր
Դաշտերի փեշին,
Շաղ ածա փոշին
Սիրուն վարդերի,
Վառ ծաղիկների,
Ու քաղցր հյութով,
Տուն յեկ բեռնված,
Շինիր մեզ համար
Անուշ մեղրահաց:


ԼՈՒՄՆԻ ԶԳԵՍՏԸ

(Ժողովրդական)

Մի կտոր ամպ առած ուսին,
Արեվի մոտ գնաց լուսինն
Ասաց նրան — բարեվ, բարեվ,
Խնդիրք ունեմ, հզոր արեվ,
Մենք չըջում ենք թեև զատ-զատ,
Բայց քո քույրն եմ յես հարազատ:
Գնա ատլաս, բեհեղ ճարի,
Բեր ինձ համար զգեստ կարի:
Արեվ — կարեն հեշտ ե, իմ անուշ քույր,
Միայն մարմնիդ չափսը ինձ տուր:
Լուսին. — Զե՞ վոր յես չափս չունեմ կայուն,
Չես քեզ ի՞նչ չափս տամ մնայուն:
Արեվ — Յերբ քո չափսդ չես ճանաչում,
Ասա, ո՞ւր ես շոր պահանջում,
Առաջ չափսդ լավ ճանաչիր,
Հետո միայն չոր պահանջիր:

ԱՂՎԵՍՆ ՈՒ ԱՐԱԳԻՆ
(Ժողովրդական)

Աղվեսը միս եր ուստում
Վոսկոր մնաց կոկորդում,
Արտասուքով աչքը թաց,
Արագիլի մոտ գնաց.
— Յերկարավիղ ա՛յ, դրակից
Հանիր վոսկորն իմ բկից,
Յեվ համաձայն իմ խոսքի
Վարձ կոտանառ՝ մի վոսկի:
Արագիլը լավ դրկեց
Վոսկորն հանեց կոկորդից,
Յեվ համաձայն այն խոսքի
Ուզեց վարձը՝ մի վոսկի:
— Այ անպիտան արարած,
Խոսեց աղվեսն ազատված,
Զե վոր յես քեզ փրկեցի
Յեվ կյանքից չզրկեցի,
Իո գլուխը այ դրկեց
Լավ գուրս պրծավ իմ բկից . . .



ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ՎԵՃԸ
(Ժողովրդական)

Ծիտ, աղավնի ու բազե,
Սիրամարդ ու լոր,
Ճյուղին չրջան են կազմել
Վիճում են մի որ:
Յեվ վիճում են աղմուկով
Ու ամեն մի հավ,
Ճչում ե թե՝ իր ճուտն ե
Ամենքիցը լավ:
Տեսան բան գուրս չի դալիս
Վեճից աղմկոտ
— Գնանք, ասին, միասին,
Ազուվ ազու մոտ:
Ուշաղիր վեճը լսեց
Մեծ ազուվ աղին,
Իր ծանր ու մեծ կարծիքն ասեց
Այն վեճի մասին՝

— Թոշունների ցեղերի մեջ
Մի լավ ճուտ թե կա,
Ամենքին դուր,
Վոսկեվիետո՞ւր
Իմ ճուտիկն ե դա...

ԽՇՈՒԿՆ ՈՒ ՔԱՄԻՆ

(Ժողովրդական)

Խշուկի գլխում միտք ծագեց մի որ
Դառնալ անտառին տեր ու թագավոր:
Առյուծի չքեղ մի մորթի զտավ
Ուսերին գցեց ու անտառ մտավ:
Ել զել ու աղվես, ել արջ ցեղովի
Հավաքեց, քաշեց բերեց ժողովի:
— Այսորվանից յետ, դուք լավ իմացեք,
Վոր յես եմ տերը հիմա բոլորիդ,
Իսկ յեթե կամքիս գեմ եք գնացել
Սև եմ կաղելու ձեր կարմիր որին:
Թարսի պես, ճառի հենց այս տաք ժամին
Մեկ ել բարձրացալ մի ուժեղ քամի,
Առյուծի ընտիր մորթին նետեց ցած
Մեր խեղճ իշուկին թողեց մերկացած:
Ու գաղանները այս վոր չտեսա՞ն
«Հաֆ» արին մեկից ու վրա հասան,
— Տո, իշագլուխ, քո եղ եշ հալով
Քո այդ եշ գլխի ուժին զոռ տալով,
Ուզում ես իշխող գառնալ մեր վրա,
— Զե՞, քոր են գալիս կողերը սրա:
Յեվ վրա տվին,
Գլսին ու թեվին,
Մեջքին ու պոչին,
Իր մազոտ գնչին,



Համ գնդօտեցին,
Ու գզզեցին:
Թշվառ իշխ թշվառ վորդին,
Ծակծկոտված կողն ու մորթին,
Գնաց հեռու ծածուկ մի տեղ,
Ու քամու հետ կովեց ահեղ:
Քամին վոչ ձայն վոչ ձուն հանեց,
Միայն վերջում պատասխանեց
— Հիմար, ի՞նչ ես ուզում քամուց,
Եշ ես ծնվել, վոչ թե առյուծ:

ԿԱՏՈՒՆ ՈՒ ԼՈՐԸ

(Ժողովրդական)

Կատուն ու լորը ընկերներ դարձան,
Իրար սիրեցին ու ընկերացան:

Լորիկ մարիկը տանից դուրս գալիս
Կատվին եր իրա ճուտը պահ տալիս,

Մի որ ել յերբ վոր լորիկն յեկայ տուն,
Տեսավ իր ձագին խեղդում ե կատուն,

— Վա՛յ, ցավս ուտես, անզիտան կատու,
Յես ճուտեր հանեմ, ու զաս ուտես դու:

— Քիչ ե, թե միայն ճուտեր ունենաս,
Պետք ե և նրանց պահելն իմանաս,

Ասաց մեր կատուն
Ու փախավ իր տուն:

ԳԱՅԼՆ ՈՒ ՅԵԶԸ

(Փողովրդական)

Այսպես ե պատմում այս առակը մեզ
Դյուլացու մեկը կորցրեց մի յեզ:
Սարեր ու ձորեր, անտառ լեռ ու հանդ
Վոտնատակ տվեց, արեց քար ու քանդ,
Բայց վոչ մի հովտում,
Յեվ վոչ մի արտում
Յեզը չգտավ: Յերբ ուզեց տուն գալ
Վորտեղից վորտեղ դեմն յելավ մի գայլ:
Գյուղացի. — Ասա, չե՞ս տեսել դու իմ չալ
յեզը,

Ով գիտի, գուցե յեկել ե գեոր:
Գայլ. — Իհարկե տեսա,
Միայն թե ասա,
Վորքան փող պետք ե դու ինձ
վճարես,
Վոր կորած յեզդ յես իսկույն
ճարեմ:
Գյուղացի. — Զքիի՛ր աչքիցս ՚խորամանկ
դու. դայլ,
Վոչ մի կոպեկ ել չեմ ուզում քեղ
տալ:

Գայլ. — Գիտեյի վոր վարձս կթողնես ձրի,
Այդ պատճառով ել գլխից վերցրի,
Իմ պատասխանը ախտեր ջան ես ե.
Վարձիդ տեղ կերա յես քո չալ
յեզը:

ԶՆԾԱՂԻԿԻ ՅԵՐԳԸ

Սարը կանաչեց,
Առուն կարկաչեց,
Զնծաղիկն ուրախ
Զայն տվեց, կանչեց՝
— Սիրուն ծաղիկներ,
Նախշուն ծաղիկներ,
Դեռ քա՞նի մնաք
Զյան վերմակի տակ:
Քնից յելեք վեր,
Արեվն ե յեկել,
Էցրեք շուտով
Դաշտը ձեր հոտով:
Այս վոր լսեցին,
Ծաղիկ խոտ ու ծիւ,
Աչերը բացին,
Անուշ ժպտացին:

ՄՈՐ ՑԵՐԳԸ

Ինքը անուշ,
Լեզուն անուշ
իմ բալեն,
Հոգուս միջից
Թռած մի ծիտ
իմ բալեն։

Ինքը անուշ,
Լեզուն անուշ
իմ բալեն,
Համով-հոտով
Շաքար ու նուշ
իմ բալեն։

Տոտիկներով թափ արա,
Թաթիկներով չափ արա,
Ծափիդ, ծիծաղիդ մատաղ
Ծափ առ, ծափ տուր, ծափ արա։

ՈՒՐԱԽ ՑԵՐԳ

(Ժողովրդական)

Սաղը բերեք
Ալյուր մաղենք

Թըփ-թիփ
Թըփ-թիփ։

Զուրը բերեք
Խմոր շաղենք

Ճըպ-ճիպ
Ճըպ-ճիպ։

Թոնիր վառենք
Լավաշ վոռենք

Ճըտ-ճիտ
Ճըտ-ճիտ։

Սեղան բացեք
Զուռնան ածեք


Մամի-ծիփ
Մամի-ծիփ:

Պարը բռնենք,
Ծերգենք, թռնենք

Հոպ-հիպ
Հոպ-հիպ:

Ուրախ կյանքով,
Անուշ յերգով

Մամի-ծիփ
Մամի-ծիփ:



ՄԱՋԻԿՆ ՈՒ ՄԵՂՈՒՆ

Մրելի տակ անծայր դաշտում
Մեղուն տեսավ մի ծաղիկ,
Մոտիկ վազեց վոր են նախշուն
Ծաղկի հյութերը քաղի:

Մեղու.— Բարե, բարե կապույտ ծաղիկ,
Ա՛խ, ինչ լավն ես ու գալար,
Թող քո սրտից մեղուն քաղի
Անուշ հյութեր իր համար:

Ծաղիկ.— Պստիկ մեղու,
Ճստիկ մեղու,
Աջիստասեր ու արի,
Ո՞ւր ես տանում,
Ի՞նչ ես անում,
Փոշին դու իմ թերթերի:

Մեղու.— Կապույտ ծաղիկ, նուրբ ու
նոշխուն,

Բացված դարնան հովի հետ,
Յես քո հյութից մեղը եմ քաշում,
Համով-հոտով բուրավետ:
Առավոտից մինչ յերեկո
Շրջում եմ դաշտ ու այգի,

Չե՞, վոր յես ել անդամն եմ Ժիր
Մեր յերջանիկ համայնքի:
Ի՞նչ ե մեղուն համայնքից զուրս
Թույլ ու չնչին և անզոր,
Իսկ իր հսկա համայնքի մեջ
Յե՛վ ուժեղ ե, և' հզոր:
Մենք միասին հաշտ ու ուրախ
Աշխատում ենք ու գատում,
Աշխատանքը՝ աշխույժ մի խաղ,
Կյանքը՝ վայելք ու խնդում:
Ով չաշխատեց մեղլանոցում,
Չի ունենա կյանք ու հաց,
Հոտով—հյութով սիրտդ լեցուն,
Կապույտ ծաղիկ, իմ դեմ բաց:


Ծաղիկ.—Յես արելի ջինջ շողերով,
Չերմ շողերով եմ բացվել,
Արշալույսի մաքուր ցողով,
Պայծառ շաղով լվացվել:
— Արի՛, արի՛, սիրուն մեղու,
Յե՛վ ժրաշան և՛ կայտառ,
Բաց եմ արել սիրտս քո դեմ
Արի՛ քաղի՛ր հյութը տար,
Վոր դու յերբեք չծուլանաս,
Լինես և՛ ժիր և՛ արի,
Յեվ աշխարհին բարիքներ տառ
Համո՛վ հոտո՛վ բուրալի:

ԾԱՌԸ ԾՈՎԱՓԻՆ

(Ժողովրդական)

Ճեսեք, ծովը ծփծփում ե
ուրախ ու ցնծուն,
Խաղ ե անում ավաղի հետ
ու ափը ծեծում:
Ահա տեսեք, ծառ կա ափին,
ու ծովը ցնծում,
Խաղ ե անում ավաղի հետ
ու ափը ծեծում:
Ահա, տեսեք, բուն կա ծառին՝
կանաչ ծովափին,
Ծառն ե ուրախ գնում — գալիս,
ու տալիս ծափին:
Ահա, տեսեք, ծիտ կա բնում՝
կանաչ ծովափին,
Ծառն ե ուրախ գնում գալիս,
ու տալիս ծափին:
Ծիտն իր բնում ճուտ ե հանում
կանաչ ծովափին,
Ծառն ե ուրախ գնում գալիս,
ու տալիս ծափին:
Յեկավ սիրուն-անուշ աշուն,
ծիտերը նաշխուն,

Թեվեր առան, ծիտեր դառան,
 յեվ վերեվ թռան:
 Ծիտեր դառան,
 վերեվ թռան
 իսկ են ծովափին,
 Ծառն եւ նորից դնում դալիս
 ու տալիս ծափին:



ԶՄՈԱՆ ԱՌԱՎՈՏԸ

Զմռան մի ցուրտ առավոտ
 Ծիտը թռավ ծտի մոտ,
 Ասաց՝ ծիտիկ միտիկ,
 իմ լավ ծիտիկ,
 վոչ թռչում ես
 վոչ յերգ ասում,
 Ինչ ես անվերջ յերազում:
 Ասաց՝ դարուն եմ ուզում,
 վազող առուն եմ ուզում,
 Կանփաչ մարգեր եմ ուզում,
 Գարնան յերգեր եմ ուզում,
 Առանց դարնան արեվի,
 Առանց կանաչ սարերի,
 Առանց դարլար մարգերի,
 Առանց դարնան յերգերի,
 Եւ վո՞նց սիրտը ծիտիկի
 Աւրախանա ու յերգի:
 Արի՛, արի՛ ո՞վ դարուն,
 Գալիք բարի զո՞վ դարուն,
 Ծիտիկներիս բարեկամ,
 Ծիլ ու ծաղիկ ծո՞վ դարուն:

Ա Ր Տ Ո Ւ Տ Ը Լ

Որոր-շորոր մի արտում,
Բուն եր դրել մի արտուտ,
Ու ձվերին նա տիտիկ՝
Ճռւտեր հանել խատուտիկ:

— Իմ սիրունիկ արտուտներ,
Անուշ-մեղուչ բալիկներ,
Թևեր առեք թափ արեք,
Արտ ու արոտ չափ արեք,
Արեի հետ, հովի հետ
Ճիտ-ճիտ արեք, ծափ արեք:
Այսպես յերգով ու տաղով,
Մայր արտուտը իր խաղով
Մեծացնում եր ճըտ-ճըտիկ
Շերեք սիրուն արտուտիկ:
Մի ուշ ամուն յերեկո,
Մայր արտուտը իր յերգով,
Սրտով ուրախ, զվարթուն
Թևին տվեց մտավ տուն,
Վոր ճուտերին իր նայի
Սիրի, պահի, փայփայի,
Ճուտերն այնժամ ասացին՝
— Արտ եր յեկել գյուղացին,
Զեռքին ուներ մանղաղ սուր,
Արտը հնձել եր ուղում,
Ավեր կանի տունը մեր,
Ավեր կանի բունը մեր:

— Նա մենա՞կ եր թե խմբով,
Հարցընց մայրը սարսափով:
— Մենակ եր նա, մեն մենակ:
— Դե, իզուր մի վախենաք:
Մեն-մենակ մի գյուղացի
Մինչև արտը այս հնձի՛...

Անցան որեր գեռ ելի,
Իսկ մեծ արտը ցորենի,
Ծուսի եր տալիս ծովի պես,
Վաղում, հոսում հովի պես:

Ելի մի որ զվարթուն,
Մայր արտուտը յեկավ տուն,
Վոր ճուտերին իր նայի,
Սիրի, պահի, փայփայի,
Ճուտերն ելի ասացին՝
— Արտ եր յեկել գյուղացին,
Ավեր կանի բունը մեր,
Ավեր կանի տունը մեր:

— Նա մենա՞կ եր, թե խմբով
Հարցընց մայրը սարսափով:
— Խմբով յեկավ գյուղացին,
Արտի կեսն ել հնձեցին:
Մի տեսնեյիր ինչ ուժով,
Գտեսնված աշխուժով,
Այնպես ուժով եյին քաղում,
Հանդն եր ահից դողդողում:

— Վոր այդպես ե դե արեք,
Մեզ մի ուրիշ բուն ճարենք,
Կոլեկտիվի ուժի դեմ
Մենակ մարդ չի դիմանա,
Կոլեկտիվի ուժի դեմ
Եւ ի՞նչ արտ կդիմանա:

Զեր ծառին ծիվ-ծիվ,
Դողում ե ցրտիցը,
Մրսում ու ծվծվում,
Յերբ ձմեռ ե գալիս
Տաք յերկիր չի չվում:

Ի՞՞՞՞ ԹՌՉՈՒՆՆԵՐ ԵՆ

Յերկու սիրուն աչիկ ունի
Մկրատաձև պոչիկ ունի,
Կուրծքն սպիտակ կաթի նման,
Թեհերը ու սաթի նման:

Հպարտ-հպարտ
Ման ե գալիս,
Քիթը՝ վոսկոր,
Մորուսը՝ միս:

Մի թռչուն կա փշակում,
Առավոտից իրիկուն,
Ահա այսպես ե յերգում
— կո՛ւ-կո՛ւ,
— կո՛ւ-կո՛ւ:

Լողում ե նավ չի,
Թռչում ե հավ չի,
Յերգում ե այն ժամին,
Յերբ մոտ ե իր մահին:

Մեր ծառին — ծիվ-ծիվ,

Փախցնում ե ամեն ինչ,
Վոչիար, պախրա ու յերինջ,
Ռւտում, ուտում կշտանում,
Ժայռին կտուցը սրում:

Ամբողջ ցերեկը քընում,
Մթնով վորսի յե գնում,
Վորսում միջատ ու թռչուն,
Լույսը բացվեց՝ տուն թռչում:

Ամպից պոկվում ե հանկարծ
Ու քարի պես նետվում ցած,
Հանկարծակի, այնքան շուտ
Թոցնում ե հավ ու ճուտ:

Փոքրիկ բունը արտին կից
Սերմնացան հին դրկից,
Սերմնացանի համար նա
Յերգ ե յերգում սրտալից:

Արտերում մի մարիկ
Սիրուն ու բոլորիկ,
Յերգում ե վազվզում,
Ճուտերով կլորիկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|-----------------------|----|
| 1. Ծաղկաձոր | 3 |
| 2. Խնդրության տոնածառ | 5 |
| 3. Կանաչ դաշի | 6 |
| 4. Գոլք Մեծ Ստալինին | 7 |
| 5. Ծիտիկների զրույցը | 9 |
| 6. Մանուկն ու ծիտիկը | 10 |
| 7. Մեղու | 12 |
| 8. Լուսնի զգեստը | 13 |
| 9. Աղվեսն ու արագիլը | 14 |
| 10. Թռչունների վեճը | 16 |
| 11. Իշուկն ու քամին | 18 |
| 12. Կատուն ու լորը | 20 |
| 13. Գայլն ու յեզը | 21 |
| 14. Զնծաղիկի յելուը | 22 |
| 15. Մոր յերզը | 23 |
| 16. Ռւրախ յերգ | 24 |
| 17. Ծաղիկն ու մեղուն | 26 |
| 18. Ծառը ծովափին | 28 |
| 19. Զմուան առալոտը | 30 |
| 20. Արտուտաը | 31 |
| 21. Ի՞նչ թռչուններ են | 33 |

ՀԵՂԻՆԱԿԻ ԿԱՂՄԻՑ

Խնդրում եմ բոլոր ուսուցիչներին, ջոկվարներին, պիտներներին, մանկապարտեզի ղեկավարներին գրել իրենց գիտողությունները «Ծաղկաձոր» մանկական բանաստեղծ . Ճողովածույի շուրջը հետեւալ հասցեյով՝ Յերևան, Գրողների տուն, Մկրտիչ Կորյունին:

Գառա. Խամբաղյիր՝ Գեղամ Սարյան
Տեխ. Խամբաղյիր՝ Ան. Գասպարյան
Մրբագրիչ՝ Ա. Արզաքանյան

Գլանվիտի լիազոր Դ—3546 Հրատ. 448:

Պատվեր 140. Տիրաժ 4000.

Թուղթ 62×94. Տպագր. 2 $\frac{1}{4}$ մամ.

Մեկ մամ. 24,480 նշան.

Հանձնված և արտադրության 5 փետրվ. 1938 թ.

Ստորագրված և տպագրության 13 մարտի 1938 թ.

Գինը 1 մ. 25 կ

ԳԵՏՀՐԱՑԻ ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ, ԼԵՆԻՆԻ 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0402208

198

10196

ԳՐԱՅԻՆ. 25 ԿՈԴ.

ՄԿՐՏԻЧ ԿՈՐՅՈՒՆ
ЦԱՀԿԱՁՅՐ
գլւ. Արմ. Ս Ս Բ Ե Ր Ե Վ Ա Ն